Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն 02

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<10>> մարտի 2021թ. ք. Երևան

2021 թվականի մարտի 10-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
Ա. Ստեփանյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար,
Ա. Թումանյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Ա. Կարապետյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ.
Ն. Թևոսյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը: Նիստից բացակայում էին հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Սահակյանը, հանձնաժողովի անդամներ Ա. Մուսոյանը:
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

2.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիր(ներ) ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 5 հայտերի քննարկում:

3. <<ՍԵԱՐՎԻ>> ՍՊ ընկերությանը տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին հայտի քննարկում:

1. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիր(ներ)ը ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեցին՝

<<ՀՐԱՉՅԱ ՄԻՀՐԱՆՅԱՆ ԵՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 12.02.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05210 լիցենզիան և N 00003, N 00008, N 00010 և N 00011 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին, <<ՌԵԱԼ ՖՈՐԵՎԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 22.02.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05412 լիցենզիան և N 00003-ից մինչև N 00007 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին, <<ՓԱՄԲԱԿԵՑԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 01.03.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05205 լիցենզիան և N 00001-ից մինչև N 00035 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին, <<ԼԱՎ ԸՆԿԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 03.03.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05382 լիցենզիան և N 00001-ից մինչև N 00004 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին և <<ՄԵԳԱՍԵՐՎԻՍ ԸՆԴ ՔՈՄՓՆԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 03.03.2021թ. դիմումը՝ ՏԾ N 0170 լիցենզիան և N 00001-ից մինչև N 00025 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց <<ՀՐԱՉՅԱ ՄԻՀՐԱՆՅԱՆ ԵՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 12.02.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05210 լիցենզիան և N 00003, N 00008, N 00010 և N 00011 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին, <<ՌԵԱԼ ՖՈՐԵՎԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 22.02.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05412 լիցենզիան և N 00003-ից մինչև N 00007 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին, <<ՓԱՄԲԱԿԵՑԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 01.03.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05205 լիցենզիան և N 00001-ից մինչև N 00035 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին, <<ԼԱՎ ԸՆԿԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 03.03.2021թ. դիմումը՝ ՏԾ N 05382 լիցենզիան և N 00001-ից մինչև N 00004 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին և <<ՄԵԳԱՍԵՐՎԻՍ ԸՆԴ ՔՈՄՓՆԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 03.03.2021թ. դիմումը՝ ՏԾ N 0170 լիցենզիան և N 00001-ից մինչև N 00025 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՀՐԱՉՅԱ ՄԻՀՐԱՆՅԱՆ ԵՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ
<<ՌԵԱԼ ՖՈՐԵՎԵՐ>> ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ
<<ՓԱՄԲԱԿԵՑԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ>> ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ
<<ԼԱՎ ԸՆԿԵՐ>> ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ
<<ՄԵԳԱՍԵՐՎԻՍ ԸՆԴ ՔՈՄՓՆԻ>> ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ համաձայն <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ կետի՝ եզրակացությունը ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. <<ՍԵԱՐՎԻ>> ՍՊ ընկերությանը Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝

<<ՍԵԱՐՎԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 19.01.2021թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00015 լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց <<ՍԵԱՐՎԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 08.02.2021թ. դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՋ 00015 լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և տեղեկացրեց, որ հանձնաժողովի նախորդ նիստում ուսումնասիրվել էր կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել էր, որ առկա է անհամապատասխանություն ներկայացված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1904103 վկայականի և շինության հատակագծի չափերի մեջ՝ հատակագծում նշված տարածքը 448 քառակուսի մետր է, մինչդեռ սեփականության վկայականում շինության ընդհանուր մակերեսը 429,35 մետր է, իսկ որպես հոսքագծի վերաբերյալ փորձաքննության դրական եզրակացության կամ օտարերկրյա պետությունների կամ կազմակերպությունների կողմից տրված փորձաքննության դրական եզրակացություն ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն արտադրողի կողմից, ուստի չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի թիվ 690-Ն որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ հոսքագծի վերաբերյալ փորձաքննության դրական եզրակացության կամ օտարերկրյա պետությունների կամ կազմակերպությունների կողմից տրված փորձաքննության դրական եզրակացություն ներկայացնելու պահանջին: Միաժամանակ՝ շինության հատակագծի սեփականատիրոջ անվան մեջ առկա է անճշտություն: <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Նշված թերությունների վերացման մասին կազմակերպությանը գրավոր ծանուցվել էր: Հանձնաժողովի անդամները կրկին ուսումնասիրեցին նոր ներկայացված փաստաթղթերը: Կազմակերպության կողմից լրացուցիչ ներկայացվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1904104 վկայականը, որտեղ ներկայացված շինության չափերը չեն համապատասխանում արտադրական տարածքի հատակագծում նշված չափերին, իսկ վկայականի հասցեում առկա է անհամապատասխանություն: <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ եթե սույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 10-րդ սյունակում նշված է «Վ» տառը, ապա յուրաքանչյուր վայրում գործունեություն իրականացնելու համար տրվում է առանձին լիցենզիան, ուստի անհրաժեշտ է ճշգրտել գործունեության վայրը:

Որոշեցին՝ հանձնարարել հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ա. Ստեփանյանին ծանուցել <<ՍԵԱՐՎԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը այն մասին, որ

անհրաժեշտ է ներկայացնել նոր հայտ՝ որտեղ նշված լինի գործունեության վայրին համապատասխան արտադրական տարածքի վերաբերյալ տեղեկատվություն:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
պատասխանատու քարտուղար Ա. Ստեփանյան